

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի /գրադմոնքի/ անվանումը	<p>Մասնագիտությունը՝ «Գեղարվեստական ձևավորման աշխատանքներ և դիզայն»</p> <p>Որակավորումը՝ « Ձևավորող՝ ցուցափեղկերի»</p> <p>Մասնագիտության կոդը՝ 2-0.01.01</p> <p>Որակավորման կոդը՝ 2-90.01.01.02-3</p>
--------------------------------------	---

Դերը	<p>Ցուցափեղկեր ձևավորողը առևտրային սրահներում, շնորհանդեսային տարածքներում և այլ ծառայությունների մատուցման կազմակերպություններում որպես խմբի անդամ կամ անհատ կատարող իրականացնում է զանազան նյութերից պատրաստված և տարբեր բարդության իրերի գեղարվեստական ձևավորման էսքիզների (նմուշ-էտալոն), դրանց հորինվածքի նախագծերի կատարման աշխատանքներ: Զբաղվում է ցուցափեղկերի սեզոնային (պայմանավորված նորաձևության պահանջների փոփոխմամբ, նոր տեսականու առկայությամբ և այլն) կամ դրանց մշտական ձևավորմամբ՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:</p>
-------------	---

II. Խնդիրների բնագավառները

Խնդիրների բնագավառ 1. Աշխատատեղի նախապատրաստում

Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Արհեստանոցում աշխատատեղի նախապատրաստում ցուցափեղկերի նախագծի իրականացման համար • անհրաժեշտ նյութերի, գործիքների և օժանդակ պարագաների ընտրում ու դասավորում • անվտանգության կանոնների պահպանում, հավանական վտանգների և վթարների կանխում • սանիտարիայի ու հիգիենայի պահանջների կատարում, • պաշտպանիչ միջոցների կիրառում, • անհրաժեշտության դեպքում՝ տուժածներին առաջին օգնության ցուցաբերում • անհրաժեշտության դեպքում ցուցափեղկի ձևավորման համար անհրաժեշտ պատրաստված աշխատանքների և նյութերի տեղափոխման ապահովում արհեստանոցից համապատասխան տարածք
--------------------------------	--

Կատարման չափանիշներ	1. նախապատրաստում է աշխատանքային տարածքը,
----------------------------	---

	<ol style="list-style-type: none"> 2. ճիշտ է կատարում անհրաժեշտ նյութերի, գործիքների և օժանդակ պարագաների ընտրությունը 3. ապահովում է աշխատատեղին ներկայացվող անվտանգությունը, սանիտարահիգիենիկ նորմատիվ պայմանները 4. պահպանում է ցուցափեղկի ձևավորման բնագավառում աշխատանքի անվտանգության, հրդեհային անվտանգության, հակահրդեհային պաշտպանության և էլեկտրաանվտանգության կանոնները 5. ճշտորեն ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունը և կենցաղային կամ արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը 6. պահպանում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի անվնաս օգտագործման կանոնները 7. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին 8. անհրաժեշտության դեպքում ցուցաբերում է առաջին օգնություն 9. անհրաժեշտության դեպքում տեղափոխում է ցուցափեղկի ձևավորման համար անհրաժեշտ պատրաստված աշխատանքները և նյութերը՝ արհեստանոցից համապատասխան տարածք
<p>Խնդիրների բնագավառ 2. Կոմպոզիցիոն հորինվածքների կատարում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • ցուցափեղկի ձևավորման պատվերի ընդունում, • ծանոթացում նախագծի (ցուցափեղկի տեսքերի, գծագրերի, համապատասխան մանրակերտի և բացատրագրի) հետ • նախագծի իրականացման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում (համապատասխան խանութներից նյութերի տեղափոխում) • ըստ նախագծի՝ հորինվածքի տարրերի կատարում
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1. ընդունում է ցուցափեղկի ձևավորման պատվերը 2. ապահովում է ցուցափեղկի ձևավորման նախագծի իրականացման համար անհրաժեշտ նյութերի առկայությունը 3. ստեղծում է նախագծի հորինվածքի տարրերը 4. անհրաժեշտության դեպքում՝ ստեղծված տարրերի

	տեղափոխում արհեստանոցից համապատասխան տարածք
Խնդիրների բնագավառ 3. Ցուցափեղկի ձևավորում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • ցուցափեղկի ձևավորման համար անհրաժեշտ նյութերի, գործիքների պատրաստում • ցուցափեղկի ձևավորման տեխնոլոգիական գործընթացի մշակում • ըստ նախագծի ցուցափեղկի ձևավորում • ցուցափեղկի ձևավորման որակի ապահովում՝ ըստ առաջադրված պահանջների • իրականացված աշխատանքի հանձնում նախագծողին
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. ընտրում է ցուցափեղկի ձևավորման համար անհրաժեշտ նյութերը և գործիքները 2. մշակում է ցուցափեղկի ձևավորման տեխնոլոգիական գործընթացի հերթական քայլերը 3. կատարում է ցուցափեղկի ձևավորման աշխատանքներ՝ ըստ տրված նախագծի 4. ապահովում է առաջադրված պահանջները և աշխատանքի որակը 5. հանձնում է կատարված աշխատանքը
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Ցուցափեղկեր ձևավորողը կրում է պատասխանատվություն՝ ցուցափեղկի ձևավորման համար օգտագործվող նյութերի անվնաս և որակյալ լինելու համար սարքավորումների և գործիքների, սանիտարական և տեխնիկական պայմանների, ինչպես նաև անձնական հիգիենայի պահպանման և ապահովման համար,</p> <p>անվտանգության տեխնիկայի ու հրդեհային անվտանգության կանոնների պահպանության համար,</p> <p>սահմանված ժամկետում պահանջվող որակյալ աշխատանքի կատարման, և աշխատանքային պայմանագրով ստանձնած մյուս պարտավորությունների կատարման համար:</p>
IV. Լեզուները	<p>Հայերեն:</p> <p>Օտար լեզվի մասնակի իմացություն՝ շփվելու և մասնագիտական գրականությունից օգտվելու համար:</p>
V. Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> • MS Word • MS Excel • Internet Explorer

VI. Գիտելիքները

- Համաշխարհային և հայ կիրառական արվեստի հիմունքների իմացություն
- Դիզայնի պատմության հիմունքների իմացություն
- Նյութերի տեխնոլոգիայի հիմունքների իմացություն
- Հորինվածքային սկզբունքների և օրենքների իմացություն
- Երկրաչափական գծագրության հիմունքների իմացություն
- Հորինվածքի ձևագոյացման միջոցների՝ համամասնության, մասշտաբայնության, ռիթմի, հակադրության և նրբերանգության իմացություն
- Կոլորիտի, գունային շեշտադրության, նյութերի ֆակտուրայի ու կազմվածքի իմացություն
- Համաչափ և անհամաչափ հորինվածքների ստեղծման սկզբունքների իմացություն
- Հիմնական և լրացուցիչ գույների, դրանց զուգորդման սկզբունքների իմացություն
- Գունային ու անգույն գուներանգների շարքի և դրանց միջև անցումների իմացություն
- Տաք և սառը նրբերանգների հատկությունների իմացություն
- Լուսավորության տարբեր տեսակների առանձնահատկությունների, լուսային լուծումների գործելաձևերի իմացություն
- Մաթեմատիկական ոչ բարդ հաշվարկներ կատարելու իմացություն
- Գործնական հաղորդակցման կանոնների իմացություն
- Բարոյականության նորմերի իմացություն՝ ղեկավարների, կոլեգաների, գործընկերների և պատվիրատուների հետ փոխհարաբերություններում
- Հաղորդակցման միջոցների, ունկնդրման, զրույցի վարման, սեփական տեսակետի հիմնավորման, համոզման և խորհրդատվության կանոնների իմացություն
- Դիմելու, խնդրանքի և երախտագիտության արտահայտման ձևերի իմացություն
- Գործնական մարդու արտաքին տեսքի բաղադրիչներին՝ արտահագուստին, սանրվածքին, հարդարվածքին, պարագաներին ներկայավող պահանջների իմացություն
- Աշխատանքային տարածքի կազմակերպման կանոնների իմացություն
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմնական

	<p>դրույթների իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների և դրանց իրականացման մեխանիզմների իմացություն • Իրավահարաբերությունների կարգավորման օրենսդրական ակտերի և այլ նորմատիվ փաստաթղթերի դրույթների իմացություն • Աշխատողների իրավունքների ու պարտականությունների իմացություն • Անհրաժեշտ տեղեկատվության փնտրման եղանակների, տեղեկատվական և հեռահաղորդակցական միջոցների կիրառման կանոնների իմացություն • Շուկայական տնտեսության հիմնական սկզբունքների, շուկայում ապրանքների և ծառայությունների առաջարկի ու պահանջարկի հասկացությունների իմացություն • Գնագոյացման մեխանիզմների իմացություն • Բիզնես-պլանին ներկայացվող պահանջների իմացություն: • Աշխատանքի անվտանգության, հակահրդեհային և քիմիական նյութերով աշխատելու անվտանգության ընդհանուր կանոնների իմացություն • Աշխատատեղի մաքրության և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման նորմատիվ պահանջների իմացություն • Տեխնաձին արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման սկզբունքների իմացություն • Տուժածներին առաջին օգնություն ցուցաբերելու կանոնների իմացություն • Բնության պահպանման և շրջակա միջավայրը չախտոտելու իմացություն
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<ul style="list-style-type: none"> • Վերլուծական աշխատանք կատարելու կարողություն • Գծագրեր կատարելու և կարդալու կարողություն • Գունային տարբերակների կատարման կարողություն • Օռակլի դիզայնի, պաստառների դիզայնի, աշխատանք փայտի վրա, գիպսի, գիպսաստվարաթուղթի, օզգապակու, փրփրապլաստի և այլ նյութերի հետ աշխատելու կարողություն • հորինվածքի, գունագիտության և լուսային գովազդի գեղարվեստական միջոցները օգտագործելու հմտություն՝ դիզայներական նախագծման խնդիրների լուծման համար • Հորինվածքներ կերտելու կարողություն՝ հաշվի առնելով

	<p>հեռանկարը և միջավայրի առանձնահատկությունները</p> <ul style="list-style-type: none"> • Չափերի հարաբերակցությունը պահպանելու հմտություն • Տարրերի համաստորադասության օրինաչափությունը պահպանելու հմտություն • Վարքի ինքնակարգավորման պարզ գործելաձևերից օգտվելու կարողություն • Բանավոր և գրավոր տեղեկատվություն ներկայացնելու կարողություն՝ պահպանելով խոսքի մշակույթի պահանջները • Որոշումներ ընդունելու և քաղաքավարի կերպով իր մոտեցումը հիմնավորելու կարողություն • Գործնական մարդու համբավ ստեղծելու և պահպանելու կարողություն • Մասնագիտական գործունեություն իրականացնելու համար աշխատատեղը նախապատրաստելու կարողություն • Մասնագիտական գործունեության կանոնակարգման նորմատիվ-իրավական փաստաթղթերը օգտագործելու կարողություն • Գործող օրենսդրությանը համապատասխան իր իրավունքները պաշտպանելու կարողություն • Կենսագործունեության անվտանգության, աշխատանքի պաշտպանության, հրդեհային անվտանգության կանոնների և սանիտարահիգիենիկ նորմատիվ պայմանների պահպանման կարողություն
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>սեփական մտահղացումները առաջարկելու կարողություն, աշխատանքային առաջադրանքները ժամանակին և որակով կատարելու պատրաստակամություն, հանձնարարականները ճշգրտելու կարողություն անհատական և խմբային աշխատանքները կատարելու կարողություն մարդկանց հետ շփվելու կարողություն բնության պահպանման և շրջակա միջավայրը չաղտոտելու հակում</p>